ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ԱՐԱ ՖԻԴԱՆՅԱՆԻՆ

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳԾՈՎ ՓՈՐՁԱԳԵՏ
ԳՈՌ ԵՆՈՔՅԱՆԻՑ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում, 2023 թվականի դեկտեմբերի 28-ից 2024 թվականի մարտի 28-ը, իրականացրել եմ ներքոգրյալ աշխատանքները.

1. իրավական փորձաքննության եմ ենթարկել Իրավաբանական վարչության կողմից ներկայացված ՀՀ կառավարության որոշումների նախագծեր, այդ թվում՝

1) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի N 134-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ.

2) «Ֆինանսապես կայուն անձ համարվելու չափանիշները սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ:

2. Մշակել եմ ՀՀ կառավարության որոշումների նախագծեր, այդ թվում՝

1) Պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների արտադրության, ներմուծման կամ արտահանման (բացառությամբ ռազմական նշանակության արտադրանք հանդիսացող նյութերի և պայթեցման սարքավորումների, ռազմական նշանակության արտադրանք հանդիսացող արտադրատեսակների) լիցենզավորման կարգն ու լիցենզիայի ձևերը հաստատելու մասին.

2) Պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առևտրի, պահեստավորման կամ տեղափոխման լիցենզավորման կարգն ու լիցենզիայի ձևերը հաստատելու մասին.